ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 114-Ա

Արթիկ համայնք 11 օգոստոսի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 85-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 107-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու կարգը հաստատելու մասին:

   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեի հանգստի և սպորտի ծառայություններ բաժնում նախատեսված գումարից հատկացում կատարելու մասին:

   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Սալնազարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Գևորգյան		
Պետրոսյան		

Տոնոյան

Սահակյան

Հաջաթյան

Մինասյան

Ռափյան

Մկրտչյան

Աստոյան

Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2023 թվականի օգոստոսի 11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 115-Ն

11 օգոստոսի 2023թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 28-ի N 228-Ն որոշմամբ հաստատված հավելված N 2-ի 14-րդ կետը, հաշվի առնելով համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությունը և համայնքի ղեկավարի կողմից համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Սալնազարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Գևորգյան		
Պետրոսյան		
Տոնոյան		
Սահակյան		
Հաջաթյան		
Մինասյան		
Ռափյան		
Մկրտչյան		
Աստոյան		
Ասատրյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2023 թվականի օգոստոսի

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023
թվականի օգոստոսի 11-ի N 115-Ն որոշման

Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարին վերապահված իրավունքների շրջանակներում, նրա կողմից տեղական վճարների դրույքաչափի, մասնավորապես՝ նախադպրոցական և արտադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում (այսուհետ՝ ՀՈԱԿ) մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի նվազեցման արտոնություն (այսուհետ՝ արտոնություն) կիրառելու կարգը, արտոնություն կիրառելու գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարի կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ընթացակարգը:

2. Համայնքի ղեկավարը ստեղծում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով:

3. Հանձնաժողովում ընդգրկվում են՝

1) համայնքի ավագանու մեկ անդամ,

2)Արթիկի համայնքապետարանի աշխատակազմից սոցիալական գործառույթներն իրականացնող մեկ աշխատող,

3)Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի գործառույթներն իրականացնող մեկ աշխատող:

4.Հանձնաժողովում կարող են ընդգրկվել այդպիսի ցանկություն հայտնած՝ համայնքի մինչև երկու շահագրգիռ քաղաքացի:

5.Համայնքի ղեկավարը նշանակում է հանձնաժողովի նախագահ և քարտուղար:

6. Համայնքի ղեկավարը տեղական վճարների նվազեցման արտոնությունը կիրառում է ավագանու կողմից սահմանված կարգին, պայմաններին և չափորոշիչներին համապատասխան.

1) 100 % զեղչերից օգտվելու իրավունք ունեն՝

ա. երկկողմանի ծնողազուրկ երեխաները

բ. արցախյան պատերազմում զոհված անձանց երեխաները

գ. I կարգի հաշմանդամության խումբ ունեցող ծնողների երեխաները

2) 50 % զեղչերից օգտվելու իրավունք ունեն՝

ա. միակողմանի ծնողազուրկ երեխաները

ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԸ

7. Արտոնության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթում ներառվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում կամ գրություն (այսուհետ՝ հայտ),
2) երեխայի, ծնողների (կամ օրինական ներկայացուցչի) անձը հաստատող փաստաթղթերի պատճենները
3) երեխայի ծնողի կամ ծնողների մահվան վկայականի պատճենը,
4) պետական մարմնի կողմից հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակը հավաստող որոշման կամ կարգի /վկայականի/ պատճենը
5) տեղեկանք ՀՈԱԿ-ից, որտեղ հաճախում է երեխան (կամ երեխաները), անհրաժեշտության դեպքում՝ երեխայի բնութագիրը,
6) հաշմանդամությունը հաստատող փաստաթուղթ (եթե երեխան կամ ծնողը հաշմանդամ է),
7) ընտանիքի սոցիալական կարգավիճակը հավաստող այլ անհրաժեշտ փաստաթղթեր (ծնողի մահվան վկայականի պատճենը, բազմազավակ ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները,
8) տեղեկանք երեխայի բնակության վայրի մասին:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

9. Արտոնությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.

1) երեխաների ծնողները (օրինական ներկայացուցիչները),
2) ՀՈԱԿ-ների տնօրենները,
3) այլ շահագրգիռ հասարակական կազմակերպությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2023 թվականի օգոստոսի 11

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու որոշման նախագիծը կազմվել է հաշվի առնելով համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությունը և համայնքի ղեկավարի կողմից համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովելու նպատակով:

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի1-ին մասի՝ արտոնություններ կարող են կիրառվել ավագանու որոշմամբ:

Տեղական տուրքերի և (կամ) վճարների գծով արտոնությունները ՝ ավագանու սահմանած փաստաթղթերի և տեղեկությունների հետ միասին, համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին:

Որոշման նախագծի համար հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022թվականի նոյեմբերի 28-ի «2023-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N228-ն որոշմամբ հաստատված հավելված N2-ի 14-րդ կետը՝ իրավունք վերապահել համայնքի ղեկավարի համայնքի կողմից մանկապարտեզի (արվեստի դպրոցի) մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի համար կիրառելու 50-ից 100%-ի չափով նվազեցման արտոնություն՝ ավագանու կողմից սահմանված կարգին, պայմաններին և չափորոշիչներին համապատասխան:

Սույն որոշման նախագծով առաջարկվու է հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվաեցման արտոնություն կիրառելու հետևյալ կարգը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու կարգը հաստատելու մասին » Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ »ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում տեղական վճարների դրույքչափի նվազեցման արտոնություն կիրառելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեում էական փոփոխություններ չեն նախատեսվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 116-Ն

Արթիկ համայնք 11 օգոստոսի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱԺՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 235-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեի «Հանգստի և սպորտի ծառայություններ» բաժնում նախատեսված գումարից կատարել հատկացում՝ ընդամենը 300000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սաներին՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամներ

Կողմ (14)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
Ոսկանյան		
Սալնազարյան		
Գևորգյան		
Հովհաննիսյան		
Գևորգյան		
Պետրոսյան		
Տոնոյան		
Սահակյան		
Հաջաթյան		
Մինասյան		
Ռափյան		
Մկրտչյան		
Աստոյան		
Ասատրյան		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2023 թվականի օգոստոսի 11

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի
օգոստոսի 11-ի թիվ 116-Ա որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԵՐԻ

Հ/Հ	**Ազգանուն**	**Անուն**	**Հայրանուն**		**Գումարը /դրամ/**
1	Զաքարյան	Անգին	Հովհաննեսի	ոսկե մեդալակիր	50,000
2	Բզնունի	Վարուժան	Արսենի	ոսկե մեդալակիր	50,000
3	Ղահրամանյան	Գևորգ	Արմենի	ծանրամարտի փոխչեմպիոն	50,000
4	Ղահրամանյան	Հովհաննես	Արմենի	ծանրամարտի փոխչեմպիոն	50,000
5	Թորոսյան	Քրիստինե	Ալիկի	բռնցքամարտ 1-ին տեղ	50,000
6	Կարախանյան	Հայկ	Էդուարդի	Ա-լիգայի չեմպիոն	50,000
	Ընդամենը				**300,000**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2023 թվականի օգոստոսի 11